«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

31 Մայիսի 2023, N 7 - 8

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 5 - 3 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2023 թվականի փետրվարի 28-ի N 5 - 3 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականության պլանավորման, պատրաստման և հրատարակման կարգի» 8-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«8. ՀՊՏՀ գիտության բաժինը կազմակերպում է ներկայացվող ուսումնական և ուսումնամեթոդական գրականության արտաքին անանուն («կույր») գրախոսություն երկու անկախ (արտաքին) փորձագետների կողմից: Փորձագետների ծառայությունը վճարովի է: Ծառայության վարձատրության չափը սահմանվում է հետևյալ համամասնությամբ.

1) դասագրքերի գրախոսության համար՝ 20.000 ՀՀ դրամ (առանց հարկերի).

2) ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկերի գրախոսության համար՝ 15.000 ՀՀ դրամ (առանց հարկերի).

3) ուսումնաօժանդակ գրականության գրախոսության համար՝ 10.000 ՀՀ դրամ (առանց հարկերի):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. մայիսի 31
Երևան